



ՓՐԻԿ ԴԻԻԱՆ. — Հրատ. Տիրայր Ար-
քեպիսկոպոս, Նիւ Եոք, 1952: Գիմ՝ 10
տոլար: Էջ 756:

Փրիկ Դիւանը, այնպէս ինչպէս որ ա-
ռաջին անգամ իբր ամբողջական դործ լոյս
տեսած է Նիւ Եոք, Երկասիրութեամբ Ս.
Էջմիածնի Մայր Աթոռին միաբան՝ Սրբ.
Տիրայր Արքեպիսկոպոսին, հոյակապ
հրատարակութիւն մըն է Մեղչոնեան հիմ-
նադրամով, արժանի զնահատանը:

Հեղինակը անձանթ մը չէ. արդէն
1918-ին «Այրարատ» ամսագրին մէջ (Թիւ
Յունուար-Մարտ, Ապրիլ — Դեկտեմբեր)
նախնական ձեւով հրատարակուած էին
Փրիկէն տաղեր՝ հանդերձ համառօտ
ուսումնասիրութեամբ մը: Կ'անցնին տա-
րիներ, ու հեղինակը միշտ հետամուտ
դանելու նոր աղբիւրներ, նոր կտորներ,
նոր տեղեկութիւններ՝ այսօր կը նուիրէ
հայ բանասիրական անդամտանին դործ
մը, որ Փրիկի անունին հետ կապուած է,
լայնօրէն քննելով անոր կեանքը, մտա-
յնութիւնը, արտադրութիւնը, կրած եւ թո-
ղած ազդեցութիւնը: Մութ են Փրիկի ան-
ձին պարագաները, ժամանակը, կեանքին
միջավայրը, իրեն վերադրուած երգերու
հարադատութիւնը: Այս բոլորը Տիրայր
Արքեպ. կրկին ու կրկին ուսումնասիրու-
թեան նիւթ ընելով կ'ընծայէ հայ գրական
աշխարհին, նոր եղբայրացութիւններով,
որոնց լիովին ստուգութիւնը հապահովցը-
ներ համեստութեամբ, խնդիրը այնքան
բարդ ու դժուարին ըլլալուն: Ոչ մէկ յա-
ւակնութիւն կայ իր քով վերջին խօսքը
ըսած ըլլալու. այլ մանաւանդ կը յայտնէ
թէ դո՛ւ պիտի ըլլայ՝ եթէ ուրիշ բանա-
սէրներ մօտենան հարցին՝ տալով նորա-
դոյն լոյսեր, ատով խնդիրը աւելի եւս
ճշտելու համար:

Քննական աշխատութիւն մըն է իրա-
պէս, արդիւնք բազմաթիւ տարիներու եւ
տընաջան պրպտումներու, ձեռագրական
համեմատութիւններու: Փրիկի տաղերը
51 հատ են, որոնցմէ վերջ կու տայ նաեւ

9 յաւելուած տաղեր, որոնց թերեւս հա-
րադատութեան վրայ կը տարակուսի: Եթէ
հատորը պարունակէր պարզապէս տաղե-
րը՝ չափազանց համառօտ եւ դիւրին դործ
մը պիտի ըլլար, բայց քննական տեսակէ-
տով անարժէք: Մինչդեռ սրբազան հեղի-
նակը ճոխացուցած է զայն բանասիրական
բոլոր տուեալներով, տեսած ու նկատի
առած բոլոր կարելիութիւնները, եւ այս-
պէս տուած է մեղի ամբողջական դործ մը,
որուն համար մեծապէս շնորհաւորելի է:

Հրատարակութիւնը կը բաղկանայ 756
էջերէ, որուն միայն 238 էջերը նուիրուած
են Փրիկի անձին, միջավայրին եւ արուես-
տին քննութեան: Յետոյ բնագրին մեկնու-
թեան կարօտ անունները, ակնարկները,
ժամանակակից պատմական տեղեկու-
թիւնները, որոնցմով բնագիրը կը դառնայ
աւելի հասկնալի, կը կազմեն քննական ու-
սումնասիրութեան Յաւելուած մասը,
նոյնպէս բանասիրական խղճամիտ քննու-
թիւններու արդիւնք:

Միջնադարեան հայ երգիչներու դպրոցը
Տիրայր Սրբազանի այս երկասիրութեամբ
կը ստանայ նոր լոյս եւ արժէք, եւ դուցէ
կը բանայ նաեւ ճամբան՝ Փրիկէն դուրս
ուրիշ հայ հեղինակներու դործին ալ ու-
սումնասիրութեան: Որով կրկնակի շնոր-
հաւորելի է. եւ արժանի լայն պնասա-
տանքի:

~ ~ ~

Կ. ՓՈԼԱՏԵԱՆ. — Զրոյց. Փարիզ,
1952: Էջ 208: Գիմ՝ 400 ֆր.:

Կ. Փոլատեան ամփոփած է հատորի մը
մէջ իր նկարագրութիւնները անձերու,
դադախարային շփումներու, դորս ունե-
ցած է կատարելով դրոյցներ հետեւեալ
դէմքերու՝ Ահարոնի, Էլիւարի, Շ. Նար-
դուհիի, Օ. Պէրպէրեանի, Հ. Ս. Տէր -
Մովսէսեանի, Լիւի-Անտրէ Մարսէլի հետ:
Հաճոյքով կը կարգացուի հատորը, որով-
հետեւ ընթերցողին կը ծանօթացնէ աշ-
խոյժ ու համակրելի ոճով մը գրական ան-
ձեր, նկարագիրներ, ըմբռնումներ:

Հեղինակը ծանօթ է արդէն իր Արեւիքի
տղաքը, կը հրաժարիմ հայութեան վէպե-
րով:

ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ. — « Որ մրկիւ
էին գառուած » (վեպ): Հրատարակու-
թիւն Անի ամսագրի, Պէյրութ, 1953. Էջ
317: Գիմ՝ 2 տոլար:

1915-ի տեղահանութիւններու հետ
կապուած վէպ մը: Հեղինակին միտքն է
ստեղծել հակադրութիւն մը թուրք եւ ա-
րաբ տարրին միջեւ՝ հանդէպ հայ ժողո-
ւորի տարաբախտ ճակատագրին: Վէ-
պին հանդուցը կը հանդէպ հայ երկու
կէտերու վրայ. առաջինը՝ այդ հակա-
դրութիւնն է. երկրորդը սիրոյ ցանցի մը
ստեղծումը հայ եւ արաբ հոգիներու մէջ:
Վէպին հերոսը Մուրատն է, Տիգրանա-
կերտցի Յակոբ աղա Մարտիկեանի տղան՝
Մուրատը, ինկած աղէտի օրերուն պէտե-
վիմբաւ անապատը՝ պատառոտուն ըզ-
դեսներով, թշուառ, ծարաւի եւ նօթի:
Արաբները մարդասէր կը դռնուին իրեն
հանդէպ. կ'առաջնորդեն զայն Շէյխ-Սա-
լաֆի (պետը ցեղախումբին) վրանը, ուր
կ'ընէ ան իր տխուր պատմութիւնը: Կը
դռնէ համակրութիւն Շէյխին մօտ, եւ կը
նշանակուի պահակ անոր Մարգան-ին:
Մարգան Շէյխ-Սալաֆի ճերմակ նոսրի
է, ամէն բանէ աւելի սիրելի իրեն: Շէյխի
փոխանորդը՝ Հասան եւս կը համակրի
Մուրատին, ըլլալով թշնամի թուրքերուն:
Կը տանի զայն իր վրանը: Հոս սակայն
Մուրատ կ'իյնայ սիրոյ վտանգաւոր ցան-
ցին մէջ: Հասանի երկու կիները՝ Սալամ,
աւելի տարէց եւ անսիրելի Հասանին, ու
Սալամի ձեռքէ աւելի երիտասարդ ու գեղանի,
կը դարձնեն հայ երիտասարդը իրենց ա-
նը: Հասան նախանձի առարկան, ու Հասան
կասկածներէ տանջուած կը հեռացնէ զայն
վրանէն: Սալամ սակայն չի դադարի
զաղտնի հետապնդելի Մուրատը՝ հակելու
զայն իր չար կամքին:

Կը յաջորդեն ուրիշ դէպքեր: Շէյխ -
Սալաֆի ցեղախումբը կը փոխէ տեղ ու
արօտավայր: Հոն շէյխին ձիաւոր ոյժը
կ'ազատագրէ հայ աքսորեալներու կարա-
ւան մը թուրք ոստիկաններու ձեռքէն:
Մուրատի համար կը սկսի դործունէու-
թեան նոր շրջան մը: Հայ կարաւանի կի-
ներէն օր. Հելէն կը միացնէ իր ջանքերը
Մուրատի անձնանուէր աշխատանքին, խը-
նամելու խեղճ կարօտեալները, մանուկ-

ներ, աղջիկներ, կիներ, պառաններ: Առա-
ջին օրերուն կը պատահի մահը տասնհինգ-
ամեայ գեղեցիկ Զուարթին, հարչկուած
ճամբուն վրայ թուրք ոստիկաններէն: Ա-
նոր մահը մեծապէս կ'ընկճէ Մուրատը,
որ փոթորկալից գիշեր մը կ'երթայ այցե-
լել անոր գերեզմանը, եւ այդ գիշեր կը
գողցուի Շէյխ - Սալաֆի սպիտակ ձին:
Հետեւեալը ծանր էր Մուրատի եւ իր ըն-
կեր պահակներուն համար. ծեծ ու բան-
տարկութիւն: Հասան, մղուած իր երկու
կիներէն եւ խղճի խայթէն դուցէ, անար-
դար կերպով հեռացուցած ըլլալուն Մու-
րատը իր վրանէն, կը միջամտէ իր քեռի-
ին (Շէյխ-Սալաֆի) մօտ եւ կ'ազատէ
Մուրատը: Հասան, թէեւ անդուծ ու կա-
տաղի, կը սիրէր սակայն հայ երիտասար-
դը «Էրմէնի»ն, անոր մէջ կարծեալով գտած
ըլլալ իր սպանուած եղբայրը: Այդ սիրոյն
դրդապատճառ մ'էր նաեւ թուրքերուն դէմ
ունեցած իր խիստ ատելութիւնը, որով
միշտ դիրք կը բռնէր թրքամոլ Սալաֆտ ա-
ղային, ամէն անգամ՝ որ սա կու դար
մտնէ իր քեռիին վրանը հաշուաւան խըն-
դիւններու համար: Սալաֆտ աղային եւ ա-
նոր դործակից խոչորագոյու Սուրիտին
դէմ է որ Հասան կը դիմադրէր Մուրատի
հետ՝ պաշտպանելու համար հայ աքսոր-
եալներուն վրանները: Հասանին եւ Մու-
րատին սրտերը կապուած են իրարու. բայց
Սալամն է որ իր կնոջական բնազդով կը
փտանդէ միշտ այդ բարեկամութիւնը: Երբ
Սալամ կը յայտնէ Մուրատին թէ կը կրէ
իր արգանդին մէջ պտուղը իր խենթ սի-
րոյն, կը ստեղծուի ուժեղ ընդդիմադրա-
կան եւ պաշտպանողական կացութիւն մը
եւ հոգեկան ամբոխումի վիճակ մը Մու-
րատին մէջ: Սալամ կը տառապի ահաւոր
ջերմով մը: Հասան որ տակաւին ոչինչ
գիտէ եղելութենէն, կը դիմէ հնարադէտ
բարեկամին, եւ Մուրատ սպանուած եղան
մը տաք մօրթով կը փաթթէ մարմինը Սա-
լամին եւ կը բուժէ զայն: Հրաշքի պէս
բան մը կը թուի այդ բժշկութիւնը, եւ
Մուրատին անունը կը մեծնայ բերնէ բե-
րան: Ատոր վրայ կ'աւելնայ գիւտը Շէյխ
Սալաֆի ձիուն՝ ընկողի խաղերով ի ներ-
կայութեան ցեղախումբի մեծամեծներուն:
Ցեղապետը կ'անուանէ զինքը իր փոխա-
նորդը՝ տալով անոր վեգիլութեան պաշ-
տօնը: Հասան, նախկին փոխանորդը, կը

կորսնցնէ իր վարկը. այս դէպքը կը լարէ զայն նախանձով ու ատելութեամբ Մուրատի դէմ: Արդէն բաւական ատենէ ի վեր Սալամի յղութիւնը (տասը տարիէ ի վեր չեղած բան մը) կասկածներու տակ կը մաշէր Հասանի սիրտը. ատոր վրայ կու գար կ'աւելնար հիմա Մուրատին փառաւորութիւնը՝ զոր չէր կրնար տանիլ:

Մուրատի համբաւը տիրական էր: Դրացի ցեղախումբի մը պետին՝ Շէյխ – Շամմուտի կիներ հիւանդ է, կը կանչուի Մուրատ իբր հրաշագործ բժիշկ: Չորս ընկերներով դացած է ան: Իր բացակայութեան Շէյխ–Սալաֆի խումբը կը ստիպուի տեղ փոխել նոր արօտավայրի մը պէտքը զգալով: Սալամ կը ծնանի ճամբորդութեան ատեն ու աշխարհ կը բերէ ճերմակ մանչ մը: Հասան կատգած է եւ վիրաւորելով իր կիներ՝ կը փախչի, ազատելու համար իր ցեղակիցներու վրէժխնդրութենէն եւ միանգամայն դառնելու Մուրատը եւ սպաննելու զայն: Մուրատ անտեղեակ է այս պարագաներուն: Շէյխ – Շամմուտի կիներ, հայուհի մը, բռնի որսացուած հայ աքսորեալներու կարաւանէն, կը տառապի աւելի իր խղճի խայթէն քան իրական հիւանդութենէ: Մուրատ բռնի իշխան հայ ըլլալու պարագան դեռ աւելի կը զայրացնէ անոր ամօթի պայքարը: Բռնի իշխան մեկնած առաւօտն է որ իր աղախիններէն մէկուն ձեռքով կը յանձնէ անոր նամակ մը, ճամբուն վրայ միայն կարդալու պայմանով: Այդ գրութիւնը կը պարզէր ամէն ինչ, իր ինքնութիւնը եւ յուսահատութիւնը անձնասպանութեամբ վերջ տալու իր կեանքին: Մուրատ կասկած չունի. այդ հայուհին իր կորսուած քոյրն է, որովհետեւ նամակին մէջ յիշատակուած բոլոր պարագաները կը նոյնանան իր անձին եւ իր ընտանիքին պարագաներուն հետ: Բայց ինչպէս փրկել զայն. Մուրատ արդէն վերադարձի ճամբուն վրայ է, եւ պաշարուած թուրք ոստիկաններու խումբէ մը: Հասան չի հասնիր դռներու Մուրատը, պաշարուած ըլլալով ինքն ալ թուրքերէ, եւ հերոսաբար կ'ուռելէ վերջ՝ կը մեռնի: Մուրատ յետ դիմադրելու տասնեակ մը թուրք ոստիկաններու, կ'իյնայ թակարդին մէջ թրքական ջոկատի մը: Թուրք կառավարութիւնը թրքամով խալէտի մատնութեամբ վրձ-

նած էր Շէյխ–Սալաֆի խումբը բնաջնջել. սա իր որդիներուն եւ բարեկամ չէյիներու օղնութեամբ կը զխմադրէ եւ կը կնքէ հաշտութիւն: Գերիները կ'ազատին, որոնց մէջ նաեւ Մուրատ, որուն կապերը կտրելու համար խառնէ՝ ծպտուած՝ միացած էր արար բանակին: Խառնէժի մէջ կը գործէր սիրոյ կոյր բնագոյր:

Մուրատ, օր. Հելէնի առաջարկով կը կազմակերպէ յետ եօթը տարի արարական վրաններու տակ բնակելու, դարձը հայ աքսորեալներուն դէպի հայկական կեդրոնները: Աքսորեալներու կարաւանը կը հասնի Հալէպ: Մուրատ ամիսներ վերջ կը հանդիպի դէպքով իր մօրեղբոր մորիկով զատուելէ վերջ տարիներով: Մուրատ կ'անյայտանայ վերստին դէպի անապատները, եւ օր. Հելէն իբր վարժուհի գործելէ վերջ, կը մեռնի թշուառ: Վէպի վերջը կ'ազդէ ընդհանուր տխրութիւն մը, փշուրած բանի մը տպաւորութիւնը:

* * *

«Որ մըրկաւ էին զատուած»ը գրական գործ մըն է եւ ի մասնաւորի վէպ մը: Ըսենք իսկոյն որ իր գնահատելի շատ կողմերուն հետ ունի անխուսափելի կերպով նաեւ իր քննադատելի մասերը. որովհետեւ ո՛ր եւ է գործ՝ ճաշակի մը, մտայնութեան մը, արուեստի մը պտուղ՝ կըրնայ չզոհացնել յաճախ քննադատութեան պահանջած բոլոր պայմանները:

Հեղինակին մէջ կայ, անտարաւոյս, միջնալայր, անձ, գործողութիւն ստեղծելու կարողութիւն: Այս կարողութիւնը որ էական է վէպի մը համար, արդէն բաւարար է որ նկատի առնուելու արժանի ըլլայ ան: Եւ արդէն, ինչպէս պիտի տեսնուի, այս գործին մէջ աւելի կշիռ ունին արժանիքն ու յաջողութիւնը՝ քան թերութիւնը եւ անյաջողութիւնը:

Գիտնալ միջնալայր ստեղծել, կը նշանակէ ընտրուած նիւթին էութեան մէջ թափանցել. ուրիշ խօսքով տալ տեղական գոյն: Դիւրին բան չկարծուի միջնալայր ստեղծել, տեղական գոյն տալ նիւթի մը: Այս պահանջը իր մէջ կը բովանդակէ ունենալ դիտողութեան ոգի, թափանցողու-

թիւն, եւ արտայայտութեան շնորհքը: Մեր վիպագիրը ունի այս բոլորը. ան կու տայ մեղի անապատային կեանքը, պէտէ-վիններու բարքերը, մտայնութիւնը, կըրքերը, այդ մարդոց նկարագիրները յայտնի դնելով եւ գոյներով: Եւ ատով մեզ կը մտցնէ արդէն միջնալայրէն ներս: Յետոյ պէտք է պատմել գիտնալ: Փանոսեան դիտէ նաեւ պատմել, հրապուրելով, հետաքրքրութիւնը լարուած պահելով, պատմել կենդանի, աշխոյժ, առանց խճողելու, առանց երկարաբանելու, առանց աւելորդ չեղումներու, այլ պատմել յառաջելով գործողութեան մէջ, ձգտելով նպատակին, բեմադրական շարժումով եւ ջերմութեամբ:

Փանոսեանի մէջ կայ նաեւ տիպարներ ստեղծելու կարողութիւն: Վիպական ու թատերական արտայայտութեանց անհրաժեշտ պայմաններէն մէկն է այս: Շէյխ – Սալաֆի՝ բարի, խաղաղասէր, արդարասէր, ցեղախումբի պետ ըլլալու արժանի մէկն է, որուն մէջ բնական մարդը կայ իր բոլոր լաւ յատկութիւններով. Հասան՝ իր քեռորդին՝ կատաղի, անագորոյն, բայց խորքին մէջ բնական բարութեան տէր, ազնիւ մէկը՝ որ կը հետաքրքրուի հայ աքսորեալներու տխուր ճակատագրով: Եթէ իր քոյրը սպաննած է առեւանդուած ըլլալուն համար, եթէ կը սպաննէ Սալամը հաւատարմութեան մէջ պակսելուն համար, ան կը հետեւի իր ցեղին ոգիին, պատիւի անտեղիտալի դաղափարին: Մուրատ՝ աշխատուած դէմք մըն է, որ կը տիրապետէ բովանդակ վէպի ընթացքին, որպէս հանճարեղ ցեղի մը որդին իշխելով պէտէվիններու վրայ: Սալամ եւ Սալաֆի, զոռուած են երկուքն ալ իրենց արար ու վաշկատուն նկարագրին մէջ. առաջինը խորամանկ ու վտանգաւոր, երկրորդը՝ աւելի անկեղծ, պարզ ու աւելի ալ սիրելի, աւելի ալ հրապուրիչ Մուրատին համար: Այս տարբերութիւնն է որ կը ստեղծէ առիթը այն ահաւոր նախաձիգ կնճիւղին որ ողբերգական հետեւանքներու կը հասնի: Օր. Հելէն՝ ազնիւ, զթոռ հոգի մը, իսկական հայ բարի ու խնամատ կնոջ պատկեր: Ծաղիկ՝ չարչըրկուած ոգի մը կնոջ, չարագած գեղեցկութիւն մը, կարաւանին գեղեցիկ ծաղիկը, որ անապատի խորշակէն փճացած ու լը-

ղբծուած պառաներու ամբաստանութեանց տարալին տակ, գեղանի ալի կին մը, որ կը փնտռէ սիրուել, եւ լուռ կը յառէ աչքերը Մուրատին, եւ չունի համարձակութիւնը արտայայտելու իր սիրտը, որ հուսկ սիրոյ համար կու տայ իր կեանքը:

Պատմելու չափ կարեւոր՝ նկարագրել գիտնալն է: Գեղեցիկ նկարագրութիւն մը՝ ջերմութիւն է, դոյն է, շարժում է զըրուածքին մէջ: Այս ալ ապահովուած է Ս. Փանոսեանի զրչին տակ: Չեմ չափազանցեմ՝ եթէ աւելցնեմ որ նկարագրութենէ դուրս արտաքինի կամ բնութեան ուժերու, ինչպէս փոթորիկի, որ անապատի կեանքին սովորական երեւոյթներէն է, վիպագիրը կ'իջնէ ձեռնհասօրէն նաեւ ոգիներու, զգացական վիճակներու պատկերացումին, հոգեկան կնճոռոտ, տաղնապալից պահերու վերլուծման, նկարագրութեան՝ իրապաշտ գոյներով, նոյնիսկ բնութեանապաշտ ըլլալու չափ: Դուրսը փոթորիկ կայ, անապատային ուժգին փոթորիկ, փոթորիկ մ'ալ կայ հոգիին մէջ Սալամի, որ երկնցած խշտակին վրայ՝ իր քովը պառկած խառնիքին կը բացատրէ իր անբացատրելի վիշտը, վախերը, կասկածները Հասանի մը անողոք դաշոյնէն իջնելիք հարուածներուն: Հասան նիւթապէս բացակայ է, բայց հոն է իր սարսափին ահաւորութեան ստուերովը: Ստուերը ուժեղ ստեղծագործութիւն մըն է այս պատկերը: Շատ կան նման պատկերներ, հոգեկան տխուր վիճակներ, ինչպէս Հասանի վճռական քայլն առնելու (կիներ սպաննելու) տաղնապի վայրկեանները: Հոգեբանական են նկարագրութիւնները նախանձի՝ ընդմէջ Սալամի եւ խառնիքի, Մուրատի Չուարթին մահուան վրայ զգացած ցաւին ու փոթորկալից դիշերուան մը մէջ անոր գերեզմանին ըրած այցելութիւնը, դադունի սէրը Մուրատի եւ խառնիքի, Ծաղիկի մահուան պատկերը, եւն...:

Նկարագրութեանց մէջ կան տեղ տեղ անբնականութիւններ. Սալէտ աղա՝ թուրք եւ արար ընդհարումին մէջ, առաջնորդ ըլլալով հանդերձ թուրքերուն՝ կը միանայ խառնիքին, թուրքերէն կալանաւորուած արար գերիները ազատելու: Արդեօք Սալէտի նկարագրին անհաստատութեան ապացոյց մըն է ասիկա հեղինակին

մէջ: Կրնայ ըլլալ: Յետոյ անկատար կը մնայ նկարագրութիւնը ընդհարումին, որ կը սկսի եւ յանկարծ կը դադրի խոշոր դոհեր տալով երկու կողմէն: Կը վերջանայ զինադադարով կամ հաշտութեամբ: Մուրաւի եւ իր քեռիին ծանօթութիւնը պաղ է եւ անբնական: Խորքեր միջավայրի մէջ եւ տարբեր պարագաներով շրջանակուած, եւ հետզհետէ աճող ու լարուած հետաքրքրութեամբ մը տեղի ունենալու էր:

Բայց ասոնք եթէ նկատի առնուելիք դիտողութիւններ են, սակայն անդին կան շատ գեղեցիկ էջեր, դրուագներ, պատկերներ, որով մէկը ոչ միայն կը կարգացուի, այլ կը կրէ իր վրայ շնորհալի եւ տաղանդաւոր դրագետի մը կնիքը:

Արտայայտութիւնները առոյգ ու գրական են. յաճախ պատկերալից բացատրութիւններ իր լեզուին կու տան դոյն ու շնորհք. այսպէս «Իրիկնալերջի ոսկի շողերուն պատմութեանը ուսին...», «Նայեցաւ շիտակ Ծաղիկի գէմքին՝ որուն վրայ արեւուն լոյսը կը ծաղկէր», «Իրենց ուսերուն կրելով՝ հետզհետէ կիզիչ դարձող կրկնոցը արեւին», «Լուսաբացը կը վարանէր հորիզոնին վրայ»: Ու մանաւանդ սա ամբողջ պարբերութիւնը:

«Ամառնային անշարժ դիշերին մէջ, անապատը կը տրոփէր կարծէք ծանր հեքով մը: Կը դաշայիք թէ պլպլացող աստղերն իսկ շունչի պակասէն կը տառապէին վերը: Հով չկար, գոլովութիւն չկար: Սալմին կուրծքը ալիք ալիք կը բարձրանար ու կ'իջնէր, քիչ մը օդ ծծելու համար»:

Անապատին վրայ ճնշող ահաւոր տաքութեան պատկերը կու տայ այդ տողերով, որոնք հոս յիշատակուած են պարզապէս բան մը դնելու համար: Ամբողջ գործին ընթացքին՝ Փանոսեան իր լեզուին ու ոճին մէջ կը դնէ հրապոյր, ոյժ ու դանադանութիւն:

Լեզուի մասին ունինք հետեւեալ դիտողութիւնները, որոնք կը պատկանին ոչ թէ արտայայտութեան, այլ պարզապէս քերականութեան: Սխալ են սա ձեւերը կադկադմիս (1), փոխ. կադկանձիւնի, բացօղեայ (259), փոխ. բացօթեայ, այցելել զիրեմ (141), փոխ. այցելել իրենց-ի, ներքնապէս փոխ. ներքնապէս-ի, առաջ եկած ըլլալով ի ներքս-էն եւ ոչ թէ ներքին-էն:

Սխալ ու անպարզաբան են հայերէնի մէջ ներած եղաւ, գտած եղաւ, քսած եղաւ, ըրած եղաւ, առած եղաւ, դրած եղաւ, գապած եղաւ, խօսած եղաւ, խոստացած եղաւ, գոցած եղաւ ձեւերը բայերու՝ փոխանակ ներեց, գտաւ, ըտաւ, ըրաւ, առաւ, դրաւ, գապեցիր, խօսեցաւ, խոստացայ, գոցեց պարզ կատարեալ ձեւերու:

Նմանապէս հեղինակին յատուկ ձեւ մըն է ժխտականի մէջ իր վերջաւորութիւնը բոլոր չէզոք կամ կրաւորական իլ, կամ ուիլ վերջացող բայերուն. օր. կ'ըսէ ինքը. չէր տեսնուիր (փոխ. չէր տեսնուեր), չէին պատկանիր (փոխ. չէին պատկաներ), չէր ախորժիր (չէր ախորժեր), չէր համարձակիր (չէր համարձակեր): Թերեւս հոս իրաւունք ունի, բայց սովորական ձեւերէն շեղում մըն է. կրնայ ըստ քերականական խիստ պահանջին՝ ներելի ըլլալ, եւ նաեւ հետեւելի. ինչպէս սովորաբար կ'ըսենք չեմ երեւիր, չես երեւիր, չ'երեւիր:

Այս փոքրիկ լեզուական անհարթութիւնները չեն տանիր իր լեզուին ընդհանուր սահուն ու գեղեցիկ, ըստ պահանջին դունդալ եւ ուժեղ արտայայտութեան առաւելութիւնները:

* * *

Թոյլ տրուի մեզի կատարել նաեւ հետեւեալ դիտողութիւնները նկատմամբ վէպին վերջաւորութեան եւ վերնագրին: Վիպական գործողութիւնը որ եօթը տարիներու միայն տարածութիւն ունի, տաք, բեմական, աշխոյժ ընթացքով կը վերջանայ Գ. մասով: Վերջին մասը Կէս գիշերէն մինչեւ արշալոյս բացատրական նպատակով գրուած է, մեղի ըսելու կամ բան մը չըսելու համար թէ ինչ եղաւ Մուրաւի, օրիորդ շէլէնը, Ահմէտը կամ Աքսորը: Եթէ վէպը սիրոյ վէպն էր Մուրաւին եւ Խատիճէին, եւ կամ հայ կարաւաններու փրկութեան հարցին շուրջ կը դառնար էսպէս՝ արդէն Գ. մասով լուծուած էր եւ հասկցուած: Վերջին մասին մէջ ընթերցողը կը սպասէ Մուրաւին վերջին եւ յաղթական քաջագործութիւններուն եւ նաեւ «Որ մըրկաւ էին զատուած» ի դադարիքին գեղեցիկ լուծման: Բայց իսկոյն կ'իյնայ յուսախաբութեան մէջ: Մու-

րաւին մօրեղբայրը, Հալէպի փողոցներէն մէկուն վրայ կը ճանչնայ յանկարծ՝ այլափոխուած եւ մեծցած Մուրաւի եւ կը տանի զայն տուն. հեղինակը կը կարծէ արդարացուցած ըլլալ իր վէպին խորագրի, բայց չի գիտեր թէ ինչ պաղ ջուր կը թափէ կոնակին վրայ ընթերցողին՝ որ հեւ ի հեւ հետեւելով վէպին արկածախնդրական դէպքերու գեղեցիկ շարքին ու պատմութեանը, յանկարծ կը գտնէ ինքզինքը շատ սովորական լուծումի մը դիմաց: Կը սպասուէր որ Մուրաւի հանդիմանէր իր անապատային կեանքին մէջ՝ իր պէր իր անապատային կեանքին մէջ, որոնք երազովը կ'ապրէր մէկուն, որուն երազովը կ'ապրէր մէկուն, որուն երազովը կ'ապրէր մէկուն: Բայց իր աքսորեալի կեանքին մէջ, բայց իր աքսորեալի կեանքին մէջ, տալով անոր դադութեան վիճակը կազմակերպելու գործունէութիւն, եւ այն ժամանակ թէ՛ չափազանց պիտի յերկարէր եւ թէ՛ պիտի կորսնցնէր պէտքի Մուրաւին հըմայքը, եւ կամ պիտի զրկէր կրկին անապատները՝ ո՛ր եւ է պատրուակով: Գիտէինք արդէն թէ Մուրաւի իր սիրտը անապատը թողած՝ վրոխ անցած էր կարաւանին, դոհացնելու համար օր. շէլէնը: Խատիճէ իրեն կը սպասէր, ան տուած էր պէտքի իր պատուոյ խօսքը. Մուրաւի անապատի դիւցազ մ'էր, այդպէս ալ մնաց իր դոյնին մէջ:

Մուրաւի վէպին վերջը այլեւս կը փոքրկանայ, կը դառնայ անշուն կէտ մը, եւ ասիկա միտ կը տպաւորէ դարձեալ ընթերցողը: Մուրաւի է այդ քաջարի տղան, թերցողը: Ո՛ր է որոք հանց բաղմութիւններ, այն՝ որ ոտք հանց բաղմութիւններ, կազմակերպեց եւ ազատեց իր աքսորեալ եղբայրները, ո՛ր է այն սրտոտ

եւ հանճարեղ երիտասարդը: Ինչո՞ւ կը լքէ Հալէպը, մօրեղբայրը՝ զոր հաղիւ գտած էր մըրիկով բաժնուած: Հեղինակը կը գտնէ լուծում մը. կը զրկէ զայն վերստին անապատները ուրիշ հայ աքսորեալներ ազատագրելու. ու Մուրաւի այլ եւս չ'երեւիր: Սալմէն ունեցած իր գաւառը Ախալքալէն է որ յանկարծ, արդէն երեսնամեայ, կը յայտնուի մօրեղբոր սրբաւորանին մէջ, եւ անոր աղջկան հետ պսակուած կը մեկնի 1947-ին Հայաստան ներգաղթի օրերուն:

Կարելի էր ուրիշ կերպով վերջացնել այս վէպը: Հեղինակին համար երկու ելք կար. կամ Մուրաւի պիտի դարձնէր հերոս մը ազգային շրջանակներու մէջ, տալով անոր դադութեան վիճակը կազմակերպելու գործունէութիւն, եւ այն ժամանակ թէ՛ չափազանց պիտի յերկարէր եւ թէ՛ պիտի կորսնցնէր պէտքի Մուրաւին հըմայքը, եւ կամ պիտի զրկէր կրկին անապատները՝ ո՛ր եւ է պատրուակով: Գիտէինք արդէն թէ Մուրաւի իր սիրտը անապատը թողած՝ վրոխ անցած էր կարաւանին, դոհացնելու համար օր. շէլէնը: Խատիճէ իրեն կը սպասէր, ան տուած էր պէտքի իր պատուոյ խօսքը. Մուրաւի անապատի դիւցազ մ'էր, այդպէս ալ մնաց իր դոյնին մէջ:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

